4811
hmytlpltG

4811
398-47
2(075)
Բ-43

ՀԱՄԱՌՕՏ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ

ԲԵԼԱՄՄԻՆՈՍԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ ՀԱՆԱԾ



158

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ
1831

12004

Լուսոնասէր մանուկ ուշեմ այսքը մատիր,
յորդոր էանէս սրբոյ մըտօք լիր ունկընդիր։
Ի՞չ վասն զոր մանկացելոյն չէմասոյ ուսիր
ՈՒ հաւասոյ զոյ խորհրդոյ լիր ՝է անդի
Օ՜է ՝է յարբունքս հասակի լեցիս ընդեր
աշակերտեալ արքայութեան երկնից դեռ։

ЦЗП-ստ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. անվան
им. А. Мясниковa

36/78. 66

Խաչելութիւն Տէր մերոյ։

ՀԱՄԱՌՕՏ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Քրիստոնէայ անուանն։

Հց. Դու ի՞նչ ես։

Պէս. Քրիստոնեայ եմ շնորհօքն Քրիստոսի.

Հց. Ի՞նչ բանով քրիստոնեայ ես եղեր։

Պէս. Հաւատալով 'ի Քն. և մկրտութեամբ որ աւազանին։

Հց. Քրիստոնէին նշանն ո՞րն է։

Հց. Սուրբ խաչն է։

Հց. Խաչակնքէ՛ զքեզ որ տեսանեմ.

Պէս, ✠ Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. ամէն։

Հց. Ասանի՞ բան պէտք է քրիստոնէին առ 'ի փրկիլ։

Պէս. Չորս բան պէտք է, այ հաւատ, յոյս, սէր, և բարեգործութիւն։

Հդ. Ո՞րն է հաւատն քրիստոնէին։

Պա. Այս երկու բանս հաւատալն է, այ՝ Նախ հաւատալ, թէ Աստուած մէկ է, և երեք անձն ունի։ Երկրորդ հաւատալ. թէ որդին Աստուծոյ մեզի համար մարդ եղաւ, և խաչին վերայ մեռաւ։

Հդ. Ո՞նչ բանով կրնանք սորվիլ այս երեք հաւատքս։

Պա. Հաւատամքին խօսքերովը, զոր Աստի տասներկու առաքեալքը շարադրեցին, և երբ ժողովքները Ճոխացուցին։

Հդ. Ինանկ է նէ, ըսէ՛ զհաւատամքն որ տեսնեմ։

Պա. Հաւատամք՝ ի մի Աստուծ հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։ Եւ՝ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Այ, ծնեալն յայ հօրէ միածին, նախ քան զամ յաւիտեանս։ Աստուած յայ. լոյս՝ ի լուսոյ. Աստուած ճշմարիտ, յայ ճշմարտէ. ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն համադոյակից հօր, որով ամ ինչ եղև յերկինս և՝ ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեանն իջեալ՝ ի յերկնից մարմնացաւ,

մարդացաւ, ծնաւ կատարելապէս
'ի մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն
սրբով։ Որով էառ մարմին, հոգի,
միտք, և զամենայն որ ինչ է 'ի
մարդ՝ ՀՇմարտապէս և ոչ կար-
ծեօք։ Ցարչարեալ, խաչեալ,
թաղեալ. յերրորդ աւուր յարու-
ցեալ. ելեալ 'ի յերկինս նովին
մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր։
Գալոց է նովին մարմնովն և փա-
ռօք հօր դատել զկենդանիս և
զմեռեալս, որոյ թագաւորութեն
ոչ գոյ վախճան։ Հաւատամք և
'ի Սբ հոգին յանեղն և 'ի կատա-
րեալն, որ 'ի հօրէ և յորդւոյ բղխի։
Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգա-
րէս և յաւետարանս. որ էջն 'ի
յորդանան. քարոզեաց զառա-
քեալն, և բնակեցաւ 'ի սրբոն։ Հա-
ւատամք և 'ի մի միայն յընդհան-
րական և յառաքելական եկեղե-
ցի. 'ի մի մկրտութի. յապաշխարութի,
'ի քաւութի և 'ի թողութի մեղաց։
'Ի յարութի մեռելոց։ 'Ի դատաս-
տանն յաւիտենից հոգւոց և
մարմնոց։ Յարքայութին երկնից։
Եւ 'ի կեանսն յաւիտենականս։
Ամէն։

Հց. Այս ըսած հաւատամքիդ ամմէն մէկ խօսքը ինչ ըսել է, գիտէս մի։

պէ. Մէկիկ մէկիկ հարցընէս նէ, ամ Ճուղապը կրնամ տալ։

Անանկ է նէ, ըսկսինք մէկիկ մէկիկ հարցընել։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս այ. կամ աբ Աստուածութեան։

Հց. Աստ ինչ է։

պէ. Մէկ անհուն էակ մի է անմարմին. և ստեղծօղ երկնի և երկրի, և ամմէն բանի։

Հց. Աստ ուր է.

պէ. Յամմէն տեղ է, այսինքն 'ի յերկինս, 'ի յերկրի, 'ի դժոխս. և այլ ամմէն տեղ։

Հց. 'Ի յերկինս ինչպէս է։

պէ. Մէկ մեծ թագաւորի մը պէս է։

Հց. 'Ի յերկրի ինչպէս է.

պէ. Մէկ մեծ առաջնորդի և հօր պէս է։

Հց. 'Ի դժոխս ինչպէս է։

պէ. Մէկ սաստիկ դատաւորի մը պէս է։

Հց. Ով որ ամմէն տեղ է. ուրեմն հոս ալ է։

պէ. Իրաւերեա. հոս ալ է։

Հդ. Ոնէ հոս է նէ, հապայ ինչու չենք տեսներ զնա։

Պե. Ոչ որ համար, վասն զի անմարմին է. և չերևիր։

Հդ. Ընդ ո՞վ է ստեղծեր։

Պե. Աստ։

Հդ. Ինչու՞ համար է ստեղծեր։

Պե. Ոչ որ համար է ստեղծեր. որ զինքը ճանչնամ. սիրեմ, պաշտեմ. և իւր պատուիրանքները պահեմ. և երբ որ մեռնիմ, յարքայութիւն երթամ։

Հդ. Աստ քանի՞ է։

Պե. Մի միայն է։

Հդ. Անձն քանի՞ է։

Պե. Երեք է. որոնք նոր Երրորդութիւն ալ կըսենք։

Հդ. Անուններն ի՞նչ է։

Պե. Հայր Աստ. Որդի Աստ. և Հոգի Սրբ Աստ։

Հդ. Հայր Աստ՞ է։

Պե. Հրամերես. Աստ է։

Հդ. Որդին Աստ՞ է։

Պե. Հրամերես. Աստ է։

Հդ. Հոգին Սրբ Աստ՞ է։

Պե. Հրամերես. Աստ է։

Հդ. Անանկ է նէ, երեք Աստ՞ է։

Պե. Դաւ լեցի. երեք անձինք, և մէկ Աստ է։

հդ. Երեք անձանց որը մեծ է, որը պզտիկ է։

պէ. Երեքնալ հաւասար են. և մեծ ու պզտիկ չի կայ միջերնին։

հդ. Ինչու համար հաւասար են։

պէ. Որոր համար. որ երեքնալ մէկ ՝ուծ են. և մէկ բնութիւն, մէկ ՝ուծութիւն, մէկ կարողութիւն, և մէկ իշխանութիւն ունին։

հդ. Հայր ՝ուծ ուսկից է։

պէ. Իրմէն է 'ի յաւիտենից. և ուրիշէն չէ։

հդ. Որդին ՝ուծ ուսկից է։

պէ. Յայր հօրէ ծնեալ է 'ի յաւիտենից։

հդ. Հոգին ՝ուծ ուսկից է։

պէ. Յայր հօրէ և յորդւոյ ելած և բըղխած է 'ի յաւիտենից.

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս մարդեղութեան որդւոյն այ։

հդ. Յայս երեք անձանց որը մարդ եղաւ. կամ մարմնացաւ։

պէ. Միայն որդին ՝ուծ։

հդ. Ինչու համար մարդ եղաւ։

պէ. Մեզ սատանային ձեռքէն. և 'ի դժոխոց ազատելու համար։

հդ. Մարդ եղաւ ասելը ինչ ասել է։

պէ. Ասել է. թէ որդին ՝ած, որ յաւիտենից ՝ած էր, 'ի ժամանակի եկաւ, և մեզի համար մարմին առաւ, և մեզ նման մարդ եղաւ։

հդ. Ուսկից մարմին առաւ. և մարդ եղաւ։

պէ. 'Ի մարիամայ ՝ոբ կոյս ՝ածածնէն՝ զօրութիւն հոգւոյն սրբոյ։

հդ. Ո՞ր օր մարդ եղաւ, կամ մարմնացաւ։

պէ. Մարտի ամսոյն՝ քսանըհինգին, աւետման օրը։

հդ. Քանի՞ ամիս մնաց յարդանդի ՝ոբ ՝ածածնին։

պէ. Ինն ամիս։

հդ. Ո՞ր օր ծնաւ։

պէ. Դեկտեմբեր ամսոյն՝ քսանըհինգին։

հդ. Յո՞ր տեղ ծնաւ։

պէ. 'Ի բեթղեհեմ քաղաքի 'ի մսուրն անբանից։

հդ. Ինչո՞ւ ինչ դրին։

պէ. Յ՝որ յետոյ կոչվեցաւ և Քրիստոս։

հդ. Յ՝որ ասելը ինչ ասել է։

պէ. Փրկիչ աշխարհի ասել է։

հդ. Քրիստոս ասելը ինչ ասել է։

պէ. Օծեալ ՝այ ասել է։

հդ. Յ՝որ Քրիստոս ինչ է։

պէ. Կատարեալ ՝ած և կատարեալ մարդ է։

Հց. Ինչո՞ւ համար կատարեալ ՅԾ է։
Պէ. Որոր համար, վասն զի կատարեալ ՅԾ-
ային բնութիւն ունի։
Հց. Ինչո՞ւ համար կատարեալ մարդ է։
Պէ. Որոր համար. վասն զի կատարեալ
մարդկային բնութիւն ունի։
Հց. Ուրեմն. մի և նոյն քանն, թէ որ
կատարեալ ՅԾային բնութիւն ունի, և
կատարեալ մարդկային բնութիւն ու-
նի. ուրեմն երկու բնութիւն ունի։
Պէ. Հրամերես. թէպէտ մի անձն է.
բայց երկու բնութիւն ունի։
Հց. Ուսկի՞ց ծնաւ Տէրն մեր Յն Տ՚Ն։
Պէ. Ի՛ մարիամայ Սբ կոյս ՅԾԾՆԷՆ։
Հց. Ինչո՞ւ համար ՅԾԾնայ Սբ կոյս կըսես։
Պէ. Որոր համար կըսեմ. որ Սբ ՅԾԾ-
ծինը կոյս մնաց յղացած ատենը
զՏ՚Ն. կոյս մնաց ծնած ատենը.
և կոյս մնաց ծննդենէն յետքը ՚ի
յաւիտեան։
Հց. Ո՞վ է Տ՚Նի հայրը մարդկուն դիէն։
Պէ. Տ՚Ն մարդկութեն դիէն հայր չու-
նի. ինչպէս ՅԾութեան դիէն ալ
մայր չունի. այլ զօրութիւն հոգւոյն
սրբոյ յղացաւ ՚ի մարիամայ սուրբ
կոյս ՅԾԾնէն։
Հց. Տ՚Ն Տէրն մեր քանի՞ տարի ապրե-
ցաւ աշխարքիս վերայ։

պէ. Երեսունեւերեք տարի. և երեք ամիս։
հդ. Ինչափ ժամանակը ինչ ըրաւ աշխարքիս վերայ։
պէ. Պարոզեց. հրաշքներ գործեց. և արքայութեան Համբան բանիւ, և գործքով մեզի սորվեցուց։
հդ. Յետքը ինչ եղաւ։
պէ. Ջարչարուեցաւ. խաչուեցաւ. և մեռաւ մեր փրկութեը համար։
հդ. Յո՞ր ժամանակ չարչարուեցաւ. և մեռաւ։
պէ. Ի ժամանակս պիղատոսի դատաւորին. և անոր հրամանաւը խաչուեցաւ։
հդ. Ո՞ր բնութը խաչուեցաւ և մեռաւ։
պէ. Մարդկային բնութը. և ոչ Աստուծութեամբը։
հդ. Յո՞ր տեղ խաչուեցաւ և մեռաւ։
պէ. Ի լեառն գողգոթայ՝ երուսաղէմ քաղաքին քովը։
հդ. Մեռնելուն յետքը մարմինը ո՞ւր դրին։
պէ. Ի նոր գերեզմանին։
հդ. Քանի՞ օր մնաց ի գերեզմանին։
պէ. Երեք օր։
հդ. Յոգին Քրիստի մեռնելուն յետքը ո՞ւր գնաց։
պէ. Գնաց ի լիմպոսը. որ դժոխք ալ

կըսուի. և անկից աղատեց արդա-
րոց հոգիքը։

Հց. Երեք օրէն յետքը ինչ եղաւ։

պխ. Յարեաւ 'ի մեռելոց։

Հց. Ո՞ր օր յարեաւ։

պխ. 'Ի զատկին ՝ի՛ յարուլթէ օրը։

Հց. Ո՞վ յարոյց զՆա 'ի մեռելոց։

պխ. Ինքն զինքն յարոյց իւր ՝ի՛ծային
զօրուլթիքը։

Հց. Յետ յարուէ քանի՞ ժամանակ մնաց
աշխարքիս վրայ։

պխ. Հառասուն օր։

Հց. Այն քառասուն օրը ինչ ըրաւ։

պխ. Իւր աշակերտացը սորվեցուց քրիս-
տոնէական հաւատոյ խորհուրդ-
քը, և ՝ի՛ սբ եկեղեցւոյ օրէնքները։

Հց. Հառասուն օրէն յետքը ո՞ւր գնաց։

պխ. Համբարձաւ յերկինս. և նստաւ
ըն աջմէ հօր։

Հց. Հիմակ Նա ո՞ւր է։

պխ. Ընծուլթէ դիէն յամենն տեղ է. և
մարդկուլթէ դիէն յերկինքն է
և 'ի՛ սբ հաղորդուլթէ։

Հց. Նի՞ համբարձմանէն յետքը ինչ
հանդիպեցաւ։

պխ. Այս եղաւ. որ տասն օրէն յետքը հո-
գին սբ եկաւ սբ առաքելոց վրայ
և առաքելքը հոգւով սբվ լըցան

և գնացին քարոզեցին Աստի սուրբ հաւատքը յամենն աշխարհ։

հց. Արդեօք Աստ վերստին պիտի գայ, թէ չէ։

պա. Հրամերես. պիտի՝ի կատարածի աշխարքիս գայ, ու դատաստան ընէ ամենն մարդու ըստ իրենց գործոցը. արդարոց արքայութի պիտի տայ. և մեղաւորներուն դժոխք։

հց. Հիմակվան մեռնող արդարոց հոգիքը ո՞ւր կերթան։

պա. Ով որ ամենևին սուրբ են, շիտակ արքայութիը կերթան. բայց թէ որ ներելի մեղք ունենան, կամ թողված մահուչափ մեղքերուն պատիժը վճարած չըլլան, քաւարանը կերթան։

հց. Հապայ մեղաւորներուն հոգիքը ո՞ւր կերթան։

պա. Դ՝ժոխքը կերթան։

հց. Ով որ հիմակ արդարոց հոգիքը արքայութիը կերթան. և մեղաւորներունը դժոխքը. ուրեմն աւելորդ է, որ Աստ՝ի կատարածի աշխարքիս գայ դատաստան ընէ։

պա. Աւելորդ չէ. վասն զի հիմակ արդարքէ միայն հոգւով կերթան յարքայութիը. և մեղաւորները միայն

հոգւով կերթան դժոխքը. սա-
կայն 'ի կատարածի աշխարքիս պի-
տի հոգւով և մարմնով երթան.
կամ թէ ըսենք, յայն ժամանա-
կը բոլոր մարդը պիտի երթայ.
անոր համար պէտք է, որ Վեր-
գայ դատաստան ընէ. և ինքը
նքերը յարքայութիւնը, և մեղաւոր-
ները դժոխքը ղրկէ. հիմակ զՀո-
գին կըղրկէ. և յայն ժամանակը
զմարդն հոգւով և մարմնով։

Հց. Հաւատամքին մէջը. հաւատալու
ուրիշ բան ալ կայ մի։

Պե. Հրամերես. աս ալ կայ. որ պիտի
հաւատանք 'ի մի միայն կաթուղի-
կէ և առաքելական եկեղեցի։

Հց. Եկեղեցին ի՞նչ բան է. կամ ո՞վ է։

Պե. Ի ժողովն ամէն քրիստոնեայ հա-
ւատացելոց՝ մէկ երևելի գլխու մը
կառավարութիւն ներքևը. որ այն
գլխուն ամէնը պիտի հնազանդին։

Հց. Ո՞վ է աշխարքիս վրայ այն գլուխը։

Պե. Ի սրբազան պապն, կամ Հայրա-
պետն հռովմէական՝նք եկեղեցւոյն։

Հց. Ի՞նչ ասել է և այն յետքի բանը
հաւատամքին, որ կըսէ. 'ի յա-
րութիւն մեռելոց. և 'ի կեանսն
յաւիտենականս։

պէս. Ասել է, թէ ամէն մեռած մարդիկ 'ի կատարածի աշխարքիս պիտի յարութի առնեն իրենց մարմնովը և կենդանանան։ Այս այն հաւատացեալքը՝ որ այ շնորհաց մէջը մեռած են, յարքայութիւնը պիտի երթան, և յաւիտենական կեանքը ժառանգեն։

հց. Ինչ է յոյսը։

պէս. Յոյսն է, որով կըյուսանք աստուծմէ յաւիտենական փառքը՝ օգնականութիւն իր շնորհացը ու բարի գործքերով որն որ կընենք իրեն շնորհքովը. այլ և կըյուսանք մեր մեղաց թողութիւն Քրիստի անհուն արդեանցը համար։

հդ. Ինչ է սէրը։

պէս. Սէրն է, որով կըսիրենք Աստ մեր անհուն բարին բոլոր սրտով ամէն բանէ վեր. ու մեր ընկերը՝ կըսիրենք մեզի պէս Աստիսրուն համար։

հե. Քանի՞ կերպով կըլլայ ընկերսիրութի։

պէս. Երկու առաջինն է, որ մարդս չընէ ուրիշին ան բանը. որն որ խելքով մտածելով չուզեր որ ուրիշը իրեն ընէ. երկրորդն է, որ մարդս ուրիշին ընէ ան բանը, ինչ որ խել-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. անվ. Մաշտոցի անվ.

քով մտածելով կուզէ որ ուրիշը իրեն ընէ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս աղօթից։

Հց. Աղօթքներուն մէջը ո՞ր աղօթքն է գլխաւոր աղօթք։

Պխ. Հայր մեր որ յերկինսն է, զոր Տէր շարադրեց։

Հց. Այսա՛ որ տեսնեմ։

Պխ. Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո ոպ՛ յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապաղորդ տո՛ւր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, ոպ՛ և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ՝ի փորձուն՝, այլ փրկեա՛ զմեզ՝ի չարէ։ Զի քոյ է արքայութի՛ն և զօրուն՝ և փառք յաւիտեանս. ամէն։

Հց. Հայր մեր որ յերկինսէն յետքը՝ ո՞ր աղօթքն է առաւել գլխաւոր և ընդունելի։

Պխ. Ողջոյն քեզ Մարիամն է. որ անուշ՝ այ յետքը աղօթք կընենք առ ա-

մենատուրբ մայր նորա առ տիրամայր Աստուածինը։

հց. Այսա որ տեսնեմ։

պե. Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Յիսուս։ Սրբուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա վասն մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մահուան մերոյ. ամէն։

հց. Ովքեր հարադրեց ողջոյն քեզ Մարիամը։

պե. Կէսմը գաբրիէլ հրեշտակն ըսաւ. կէսմը սրբուհին Եղիսաբէթ. և կէսմը Սրբ Եկեղեցին։

հց. Այսոնցմէ 'ի զատ ուրիշ աղօթքներ այլ կա՞ն ընդունելի՞ այ, և մեր ներ սուրբ Աստուածնայ։

պե. Հրամերես կան. այսինքն ժամագրքին աղօթքները, հաւատով խոստովանիմը, նարեկայ աղօթքները, Աստուածնի Սրբ վարդարանը և լիթանիան, հրեշտակ Տէն, ողջ լեր թագուհին, և ասոնց նման ուրիշ լաւ աղօթքներ։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս պատուիրանացն այ, և եկեղեցւոյ։

հց. Քանի՞ են այ պատուիրանքները,
պխ. Տասն են։
հց. Ասա՛ որ տեսնեմ։
պխ. Ա. Ես եմ Տէր Աստ քո. մի՛ ունիցիս զայլ Աստ առաջի իմ։
Բ. Մի՛ առնուցուս զանուն այ քո ընդունայն։
Գ. Յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա. այսինքն զկիրակէս։
Դ. Պատուեա՛ զհայր քո և զմայր։
Ե. Մի՛ սպանաներ։
Զ. Մի՛ շնար։
Է. Մի՛ գողանար։
Ը. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։
Թ. Մի՛ ցանկար կնոջ ընկերի քո։
Ժ. Եւ մի՛ ամի, որ նորա է։
հց. Ո՞վ տուաւ զայս պատուիրաններս։
պխ. Ած տուաւ 'ի հին օրէնքը մովսէս մարգարէին ձեռօքը. և Որ Տէր մեր հաստատեց զանոնք 'ի նոր օրէնս։

հց. Ո՞վ որ չի պահէ զայս պատուիրան-
ներս, այնպիսին ի՞նչ կըլլայ։
պէ. Այնպիսի մարդը մահուչափ մեղք
կըմեղանչէ, և դժոխքը կերթայ։
հց. Քանի՞ են ՝ի՞նչ եկեղեցւոյ պատուի-
րանները։
պէ. Հինգ են։
հց. Այսա՛ որ տեսնեմ։
պէ. ՝ա. Յաւուրս կիրակէից և տօնից
տեսանել զպատարագ։
՝բ. Պահել զպահս և զծոմապահս
հրամայեալս։
՝գ. Ի տարւոջն՝ գոնէ միանգամ
խոստովանիլ։
՝դ. Հաղորդիլ՝ գոնէ ՝ի տարւոջն
միանգամ. ՝յ՝ի զատկի յարու-
թեանն։
՝ե. Տալ զտասանորդս ընչից։

ԳԼՈՒԽ Զ։

Յաղագս Խորհրդոց ՝Ի Եկեղեցւոյ։

հց. Քանի՞ են խորհուրդք ՝ի՞նչ եկեղե-
ցւոյ։
պէ. Լօթն են։
հց. Այսա՛ որ տեսնեմ։

պա. ա. Մկրտութիւն։
բ. Դրոշմ։
գ. Սպասաւորութիւն։
դ. Հաղորդութիւն։
ե. Վերջին օծումն։
զ. Կարգ քահանայութիւն։
է. Պսակ։

հց. Մկրտութիւնն ինչ է։

պա. Մէկ խորհուրդ մի է եկեղեցւոյ, որ կը ջնջէ զմեղքն սկզբնական, և կընէ զմեզ քրիստոնեայ. և որդեգրական որդի։

հց. Ո՞վ է սպասաւորը մկրտութեան։

պա. Քահանայն է. բայց հարկաւոր ժամանակը ուրիշ մարդ ալ՝ որ քահանայ չէ, կրնայ մկրտել։

հց. Ինչո՞վ կըլլայ մկրտութիւնը։

պա. Այս երկու բանովս, որ երեխայինվրայ ջուր լեցընելով. և ասելով այսպէս։ Այս անուն, մկրտի՛ ի ձեռն իմ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. կամ՝ ըստ լատինացւոց, Այս մկրտեմ զքեզ յանուն հօր, և այլն։

հց. Դրոշմն ինչ է։

պա. Մէկ խորհուրդ մի է եկեղեցւոյ, որ կը հաստատէ զմարդն՝ ի հաւատն Յսի Քրտի։

Հց. Ո՞վ է սպասաւորն դրոշմին։
պն. Եպիսկոպոսն է. և հրամանաւ նոր եկեղեցւոյն՝ նաև քահանայն։
Հց. Ինչո՞վ կըլլայ դրոշմը։
պն. Ասելով 'ի Ճակատն դրոշմեցելոյն զնոր մեռոնն. և ասելով զձև բանին։
Հց. Ապաշխարութիւն ի՞նչ է։
պն. Մէկ խորհուրդ մի է եկեղեցւոյ. որ կըջնջէ զմեղքն մարդոյ. զոր մկրտութենէն յետքը գործեր է։
Հց. Ո՞վ է սպասաւորն ապաշխարութեան խորհրդոյն։
պն. Հրաման ունեցող քահանայն է։
Հց. Ո՞ւրանի՞ բան պէտք է լաւ խոստովանելու։
պն. Հինգ բան. այսինքն. Ի զղջումն. Ի դաւաճադրութիւն. Ի խոստովանութիւն. և Ի պաշխարանաց վճարումն։
Հց. Մեկնէ ինձի զասոնք մէկիկ մէկիկ։
պն. Դաւաճ պէտք է, որ մարդ քննէ զիւր խղճմտանքը. և միտքը բերէ գործած մեղքերը։
ը. Փոշիմանի, այսինքն ցաւի անոնց վրայ. և յայտ թողութիւն խնդրէ.
ջ. Դաւաճադրէ. այսինքն դնէ, որ մէկ անգամ մի ալ զայն մեղքն չի գործէ։
ղ. Ուրթայ խոստովանի քահա-

նային մէկիկ մէկիկ զիւր ամէն մեղքը։

Ե. Խոստովանահօրը դրած ապաշխարանքը կատարէ։

Հց. Հաղորդուիր. կամ Սրբուիր ինչ է։

պխ. Ի մարմնին, արիւնն, հոգին, և ՝ի ածուլթին Քրիստի, հացին ու գինւոյն տեսակաց ներքևը.

Հց. Հացն ու գինին՝ երբ կըլլան մարմին և արիւն Քրիստի։

պխ. Յայն ժամանակը, երբ որ քահանայն պատարագին մէջը կըսէ հացին վրայ՝ Առէք կերէք, այս է մարմին իմ. և գինւոյն վրայ՝ Արբէք 'ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ։

Հց. Ուրեք կերէքին յետքը, և արբէք 'ի սմանէէն ետքը, կըմնան 'ի հացն և 'ի գինին իրենց բնուիր։

պխ. Այլ. հապայ սոսկ դրսի պատահմունքները կըմնան. ՝ի համը, հոտը, և ձևը. և անոնց ներքև կայ Աշմարիտ մարմինը և արիւնը Քրիստի։

Հց. Հաղորդուլթի կամ սրբուլթի առնելու քանի՞ բան պէտք է։

պխ. Երկու բան. ՝ի մաքրուլթի հոգւոյ. և մաքրուլթի մարմնոյ։

Հց. Մաքրուլթի հոգւոյն ինչ է։

պխ. Այս է. որ մարդ խոստովանած ըլ-

լայ զիւր մեղքերը. և յետքը թե սրտիւ առնու զհաղորդութիւնը։

հց. Պաքրութիւն մարմնոյն ինչ է։

պէտ. Այս է. որ սրբութիւն առնելու օրը՝ կէս գիշերէն սկսեալ ծոմ կեցած ըլլայ։

հց. Երդեօք պէտք է որ մարդ հաղորդուած ատենը, առնու թէ մարմինը և թէ արիւնը Քրիստի։

պէտ. Հարկաւոր չէ. սոսկ մարմինն ալ որ առնու՝ Ճշմարտապէս առած կըլլայ քրիստի մարմինը և արիւնը. ինչպէս հոգեվարքի հիւանդաց սոսկ մարմինը կու տան ամ ազգք քրիստոնէից։

հց. Ինչու համար սոսկ մարմինը առնելով՝ արիւնն ալ առած կըլլայ։

պէտ. Որ համար. վասն զի կառնու զկենդանի մարմինը Քրիստի. որ թե արիւննալ հետն է։

հց. Հաղորդուի առնելէն յետքը, ինչ պէտք է ընել։

պէտ. Պէտք է. որ մարդ էն քիչ մէկ քառորդի մը չափ առանձին աղօթք ընէ. և շնորհակալ ըլլայ զՔրիստէ. և խնդրէ անկից հոգւոյն և մարմնոյն պէտք եղած բաները։

հց. Հապայ՝ այն մարդը, որ հաղորդուի

առաջինպէս բնաւ աղօթք չըներ. այլ շուտմը փուչ բաներու հետ կըլլայ՝ որոնց կընմանի։

պա. Կընմանի յուդայի. որ երբ Տ՚ի մարմինը առաւ, մէկէն ելաւ գընաց մատնեց զՏ՚ն. և ինքը զինքը կախեց։

հդ. Ի երջին օծումն ինչ է։

պա. Ա՚էկ խորհուրդ մի է եկեղեցւոյ. որ մարդուն ներելի մեղքերը ու մեղաց մնացորդները կըջնջէ. և զօրութիւն կու տայ հիւանդին հոգւոյն. որ քաջապէս դէմ կենայ սատանային փորձութեանը։

հդ. Որոնց պէտք է տալ զվերջին օծումն։

պա. Ա՚իայն ծանր և վտանգաւոր հիւանդաց։

հդ. Ի՞նչ է նիւթն վերջին օծման։

պա. Օ՚ծինի եղն է՝ յեպիսկոպոսէն օրհնած։

հդ. Կարգ քահանայութիւնը ինչ է։

պա. Ա՚էկ խորհուրդ մի է եկեղեցւոյ. որ եպիսկոպոսին ձեռնադրութիւն՝ տիրացու, սարկաւագ, և քահանայ կըլլան ոմանք՝՝ի սպասաւորութիւն՞ եկեղեցւոյն։

հդ. Պսակն ինչ է։

պա. Ա՚էկ խորհուրդ մի է եկեղեցւոյ.

որ օրինաւորապէս պսակելոց կու տայ զշնորհս. և անլուծանելի կապանօք կըկապէ զանոնք մինչև 'ի մահ։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս ողորմութեան։

հց. Քանի՞ են գործք ողորմութեան։
պխ. Երկու. այսինքն հոգևոր. և մարմնաւոր։
հց. Հոգևոր գործք ողորմութեանքանի՞ են։
պխ. Յօթն են. և ասոնք են։
ա. Ուսուցանել զտգէտս։
բ. Տալ զբարի խորհուրդ տարակուսելոյն։
գ. Մխիթարել զվշտացեալս։
դ. Խրատել զմեղուցեալս։
ե. Ներել ընկերին զընկալեալ վնասն։
զ. Համբերել պակասուցեց ընկերին։
է. Աղօթել վասն կենդանեաց և մեռելոց։
հց. Մարմնաւոր գործք ողորմութեանքանի՞ են։
պխ. Յօթն են. և ասոնք են։

ԹԵ. Կերակրել զքաղցեալս։
ԺԵ. Արբուցանել զծարաւեալս։
ԺԶ. Օգնեցուցանել զմերկս։
ԺԷ. Ընդունել 'ի տուն զօտարս և զպանդուխտս։
ԺԸ. Տեսանել զհիւանդս։
ԺԹ. Այց առնել բանտարկելոց։
Ի. Թաղել զմեռեալս։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Մեղաց։

Հց. Մեղքն ի՞նչ է։
Պա. Ամն ամ խօսք, կամ գործք, կամ խորհուրդ, որ այ հրամանին դէմ է, մեղք է։
Հց. Քանի՞ տեսակ է մեղքը։
Պա. Երկու. սկզբնական. և ներգործական։
Հց. Սկզբնական մեղքը ի՞նչ է։
Պա. Է այն մեղքը, որ ամմէն մարդու վրայ կըգտնուի ծնածինպէս. և զայս կըքարշէ 'ի յանհնազանդութենէ մեր առաջին հօրն այ ադամայ։ Եւ այս մեղքս կըջնջըւի մարդուն վրայէն՝ ՝ի մկրտութիւն։

Հց. Ներգործական մեղքն ինչ է։

պէ. Այն չարն. զոր մարդն խորհրդով, բանիւ, և գործով իւր կամօքը կըգործէ այ հրամանացը դէմ։ Այս ասկից միայն Ճշմարիտ ապաշխարութիւն և խոստովանութիւն կրնանք ազատիլ։

Հդ. Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է։

պէ. Երկու տեսակ. այ ներելի, և մահուչափ։

Հդ. Ներելի մեղքն ինչ է։

պէ. Այն թեթև և փոքրիկ չարն, զոր մարդ կըգործէ օրինաց և կանոնաց դուրս. և զմարդն չի տանիր 'ի դժոխքն։

Հդ. Մահուչափ մեղքն ինչ է։

պէ. Այն ծանր և մեծ չարը, որ զմարդ կըզրկէ 'ի շնորհացն այ, և յարքայութէն. և դժոխք կըտանի։

Հդ. Քանի՞ են գլխաւոր մահուչափ մեղքերը։

պէ. Օթն են, և ասոնք են.

ա. Պարտութի.

բ. Ախանձ.

գ. Բարկութի։

դ. Գահութի.

Ե. Ծուլութի.

Ջ. Ողբրամոլութիւն։
Է. Բողջախոհութիւն։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Վերջնոց մարդոյն։

Հց. Վերջինք մարդոյ քանի՞ են։
Պտ. Չորս են. այ Մահ. Դատաստան. Դժոխք. և Երկայնութիւն։
Հց. Քանի՞ կերպ դատաստան կայ։
Պտ. Երկու կերպ. այ Առանձնական դատաստան. և Ընդհանրական դատաստան։
Հց. Ի՞նչ է առանձնական դատաստանը։
Պտ. Այն է. որ երբ մարդս կըմեռնի, հոգւովը կերթայ քրիստոսի ատեանը. եթէ ամենևին արդար է, արքայութիւնը կըղրկէ զնա քրիստոս. և թէ արդար է, բայց բիծ մը ունի լէքէ մը, քաւարանը կըղրկէ. իսկ թէ անզեղջ մեղաւոր է, դժոխքը կըղրկէ զնա։
Հց. Ի՞նչ է ընդհանրական դատաստանը։
Պտ. Այն է, որ 'ի կատարածի աշխարքիս Քրիստոս կու գայ դատաստան ընել, և ամենայն մարդկանց որ յարութիւն

առեր են, իրենց գործոցը յարմար կամ արքայութի կու տայ. կամ զնոսա դժոխքը կըղրկէ։

Հց. Դժոխքը ինչ է։

Պե. Մէկ զարհուրելի և անդնդային բանտ մի է. և հոն կերթան հիմակ մեղաւորները հոգւով. և ընդհանրական դատաստանէն յետքը հոգւով և մարմնով. և հոն կրմնան յաւիտեանս յաւիտենից. և այլ չեն կրնար անկից ազատիլ։

Հց. Դժոխքը ինչ կայ։

Պե. Աստիկ մեծ կրակ կայ, և տեսակ տեսակ տանջանքներ։

Հց. Դժոխքը ո՞ւր է։

Պե. Հողուն տակը աշխարքիս մէջն է։

Հց. Քանի՞ տեսակ դժոխք կայ։

Պե. Օրս տեսակ։

Հց. Այսա՛ մէկիկ մէկիկ, որ տեսնեմ։

Պե. Առաջին դժոխքն էր լիմպոսն որ նահապետաց, և մարգարէից. և Քրիստոս զայս դժոխքս աւրեց։

Երկրորդ դժոխքն է յաւիտենական լիմպոսն՝ չի մկրտուած տղայոց. և հոն կրակ չի կայ.

Երրորդ դժոխքն է յաւիտենական դժոխքն դատապարտեալ մեղաւորաց. և յայն տեղը անունք՝ և սա-

տանան կերին և կըտանջին յաւիտեանս յաւիտենից։

Ոորրորդն է քաւարանը. որ տեղ մի է կրակով լիք. և անտեղը կերթան այն արդարոց հոգիքը, որ ներելի և փոշէ տեսակ մեղաց մէջ մեռան. և կամ ապաշխարանքնին դեռ չէին լմնցուցեր. և հոն կըտանջին, ինչվան որ մեղաց պատիժը լըմընայ. և յետքը կազատին, արքայութի կերթան։

Հց. Արդեօք մենք այս քաւարանի միջի եղած հոգիներուն կրնա՞նք օգնութի ընել, թէ չէ։

Պե. Հրամերես. կրնանք։

Հց. Ինչո՞վ կրնանք։

Պե. Պատարագօք, աղօթքով, ողորմութիւն, և այլ ուրիշ բարի գործքով կրնանք անոնց օգնել. որ շուտով ազատին քաւարանին տանջանքէն։

Հց. Արքայութին ինչ է։

Պե. Աստ երեսաց տեսութին է, զոր կը տեսանեն արդարքը. և անտեղը անպատմելի պայծառութիւն և փափկութիւն կուրախանան յաւիտեանս յաւիտենից։

Հց. Արքայութին ո՞ւր է։

Պե. Յերկինքն է. կամ այս երևցած աստ

ղերուն վրայ փառաւոր գեղեցիկ և անպատմելի տեղ մի է։

Որում արժանի արասցէ ամէնողորմն Ած զամենեսին զնա. որք ջանան ուսանիլ և սերտել զայս փոքրիկ քրիստոնէական վարդապետութիւն. Ամէն։

ՎԵՐՋ

ԱՂՕԹՔ ԵՐԿՈՅՆԵԱՆ

ԺԱՄՈՒ

Նախ սուտ գՀրեշտակ են. և ապա զաղօնս յԵրուսաղէմ։

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն. ա-ռարիչ Հրեշտակաց և մարդկան, և ամենայն եղելոց. և ողորմեա՛ քո արարածոց։

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ անբաժանելի լոյս. միասնական սուրբ երրորդութիւն և մի աստուածութիւն. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան. և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

Հայր երկնաւոր ՝ի Աշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ՝ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քոյ. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո արարածոցս, և ինձ բազմամեղիս։

Որդի՛ այ՝ ՝ի Աշմարիտ, որ խոնարհեցար ՝ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ՝ի սքի կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար, և թաղեցար, և յարեար ՝ի մեռելոց, և համբարձար առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քոյ. յիշեա՛ զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութիւնքդ քով. և ողորմեա՛ քո։

Հոգի՛ այ՝ ՝ի Աշմարիտ, որ իջեր ՝ի յորդանան և ՝ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութիւնքդ սրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քոյ. մաքրեա՛ զիս վերստին ՝ի ծայրին հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա՛ քո։

Օ՝այսոսիկ Խելն Եդաւ ՝ի Հնգեսին պուռնս, Եբր դաւանութեան հաւատոյ ղՀմամբ հանդերձ. Եւ ՝ի ՝ի ուրուք կամ Եղեն, ՝ի Բովանդակն ասասցէ։

Երեք հայր մեր, և երեք ողջոյն ասասցուք 'ի փառս և 'ի պատիւ ամենասրբ երրորդութեն, հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Հայր մեր, որ յերկինս ես. Ի այն։

Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք. Ի այն։

Սրբ աստ, սրբ և հզօր, սրբ և անմահ ողորմեա՛ մեզ։ Երեսս կրկնեա՛։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սրբ կոյս աստուածին մարիամ մայր քոյ, մատուցեալ զաղաչանս մեր որդւոյ քոյ և այր մերոյ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Ի սուրբ աստուածէնն։

Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք, տէր ընդ քեզ. Ի այն։

Տէր ողորմեա՛ց։

Քրիստոս ողորմեա՛ց։

Տէր ողորմեա՛ց։

Քրիստոս լուր մեզ։

Քրիստոս յար լուր մեզ։

Հայր երկնաւոր աստ. ողորմեա՛ց մեզ։

Որդի փրկիչ աշխարհի աստ. ողոր։

Հոգիդ Աբ Աած . ողոր ։
Աբ Արդարութի մի Աած . ողոր ։
Արքուհի մարիամ . աղօթեա՛ վ՚ա մեր ։
Աբ Աածածին . աղօ ։
Աբ կոյս կուսանաց . աղօ ։
Ա՛այր Վ՚ահի . աղօ ։
Ա՛այր Աածային շնորհաց . աղօ ։
Ա՛այր ամենամաքուր . աղօ ։
Ա՛այր ամենողջախոհ . աղօ ։
Ա՛այր անապական . աղօ ։
Ա՛այր անբիծ . աղօ ։
Ա՛այր սիրելի . աղօ ։
Ա՛այր սքանչելի . աղօ ։
Ա՛այր ստեղծողին . աղօ ։
Ա՛այր փրկչին . աղօ ։
Կոյս ամենախոհեմ . աղօ ։
Կոյս գերյարգելի . աղօ ։
Կոյս քարոզելի . աղօ ։
Կոյս կարօղ . աղօ .
Կոյս բարեգութ . աղօ ։
Կոյս հաւատարիմ . աղօ ։
Հայելի արդարութե . աղօ ։
Ի՚թոռ իմաստութե . աղօ ։
ՊատՀառ մերոյ խնդութե . աղօ ։
Ի՚նօթ հոգևորական . աղօ ։
Ի՚նօթ պատուելի . աղօ ։
Ի՚նօթ յարգական ջերմեռանդութե . աղօ ։
Վ՚արդ խորհրդական . աղօ ։

Աշտարակ դաւթեան . աղօ ։
Աշտարակ փղոսկրեայ . աղօ ։
Պալատ ոսկեղէն . աղօ ։
Տապանակ ուխտի . աղօ ։
Դուռն երկնից . աղօ ։
Աստղ առաւօտեան . աղօ ։
Արշկուլթի հիւանդաց . աղօ ։
Աղաստան մեղաւորաց . աղօ ։
Մխիթարիչ վշտացելոց . աղօ ։
Օգնական քրիստոնէից . աղօ ։
Մատուցի հրեշտակաց . աղօ ։
Մատուցի նահապետաց . աղօ ։
Մատուցի մարգարէից . աղօ ։
Մատուցի առաքելոց . աղօ ։
Մատուցի մարտիրոսաց . աղօ ։
Մատուցի խոստովանողաց . աղօ ։
Մատուցի կուսանաց . աղօ ։
Մատուցի ամ սրբոց ։ աղօ ։
Դառն այ որ բառնաս զմեղս աշխարհի . անսա՛ մեզ տեր ։
Դառն այ որ բառնաս զմեղս աշխարհի . յար լու՛ր մեզ տեր ։
Դառն այ որ բառնաս զմեղս աշխարհի . ողորմեա՛ց մեզ ։
Տէ՛ր լու՛ր մեզ ։
Տէ՛ր յար լու՛ր մեզ ։

Աղօթք։

Աչ անձառելի ողորմութեամբ, որ ոչ միայն մարդ, այլև որդի մարդոյ լինել հաճեցար. և առ 'ի կուսէն ծննդեամբ, անժամանակ ծնունդդ հօր 'ի յերկինս՝ ընտրեցեր քեզ մայր 'ի յերկրի։ Տուր մեզ աղաչեմք փառաւորել զանուն նոր Ջերմեռանդն աղօթիւք, և հրաշափառ մայրութեամբ նորա լինել գովաբանողք, և զգերագոյն փառս նորա մեծացուցանել, որ զքեզ հոգւով սրբով յղացաւ, և կուսութիւն ծնաւ. որում հնազանդ եղեր թագաւորդ յաւիտենից, տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյն 'ի յաւիտեանս։ Ամէն։

Ընդ հովանեաւ պաշտպանութեամբ քոյ ապաւինիմք սուրբ Աստուածածին, մի անտես առներ զաղաչանս մեր 'ի կարիս մեր. այլ միշտ փրկեա՛ զմեզ յամենայն վտանգից, կոյս ամենափառաւոր և ամենօրհնեալ։

Ողջոյն ընդ քեզ տիրուհի, ողորմութեամբ մայր, կենդանութիւն մեր և քաղցրութիւն և յոյս, աղաղակեմք առ քեզ աքսորեալ որդիքս Եւայի, և առ քեզ հառաչեմք

հեծելով և ողբալով 'ի հովտէս արտասուաց ։ Դարձ աղէ՝ հայեաց 'ի մեզ ողորմութեամբ քով, և յելս մեր յաքսորանացս վայրէ, արժանացո՛ զմեզ տեսանել զօրհնեալ պտուղն որովայնի քոյ զՅ՚ս, ո՛վ բարեգութ և քաղցր կոյս Մարիամ ։ Բարեխօսեա՛ վ՚ս մեր Տ՚ծածին զի խոստմանցն քո՛ի արժանաւորեսցուք . ամէն ։

Ընկանիմք առաջի քոյ Տ՚ծածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ ։
Բարեխօսեա՛ վ՚ս անձանց մերոց . և աղաչեա՛ զմիածին որդիդ ։
Փրկել զմեզ 'ի փորձութենէ, և յամ վտանգից մերոց ։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք առ պահապան հրեշտակն մեր ։
Հայր մեր որ յերկինս ես, Տ՚ր եղիցի ։
Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք ։

Ա՛մ ։

Ո՞վ հրեշտակ Տ՚ն, որ պահապան իմ ես, զյանձնեալս առ քեզ Տ՚ծային գըթութիւնք, լուսաւորեա՛ յայսմ գիշերի, ուղղեա՛, հովուեա՛, և պահպանեա՛ . ամէն ։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք առ Ն՝ որ գրիգոր լուսաւորիչն մեր, վ՚ն լուսաւորուլթէ, և բարեյաջողուլթէ աղգիս մերոյ։

Հայր մեր որ յերկինս ես, Ն՝ որ եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք առ Ն՝ հայրն անտոն Ճգնաւոր, որպէս զի պահեսցէ զմեզ ՚ի կրակէն։

Հայր մեր որ յերկինս ես, Ն՝ որ եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք առ Ն՝ն յակոբ մծբնայ, և առ Ն՝ն հռոքոս, որպէս զի պահեսցէն զմեզ՚ի ժանտամահէն։

Հայր մեր որ յերկինս ես, Ն՝ որ եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք առ Ն՝ հայրն անտոն պատուացին, որպէս զի պահեսցէ զմեզ յամ պատա՝ հարաց չարաց։

Հայր մեր որ յերկինս ես, Ն՝ որ եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք առ Ն՝ հրեշտակապետն Միքայէլ, և առ Ն՝ հայրն յովսէփ, որպէս զի աղօ՝

Թիւք նոցա պարգևեսցէ մեզ տէր բարի մահ և երջանիկ վախճան։

Հայր մեր որ յերկինս ես, եր եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք վասն ամենայն հոգւոց քաւարանին։

Հայր մեր որ յերկինս ես, եր եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Մի հայր մեր և մի ողջոյն ասասցուք վասն հոգւոց ծնողաց մերոց, հարց, և մարց, եղբարց, և քերց, և ամ ազգականաց։

Հայր մեր որ յերկինս ես, եր եղիցի։
Ողջոյն քեզ մարիամ, լի շնորհօք։

Եր ապա ասա Աղօթս։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց։

Եթէ զանօրէնութիւնս քննես տէր, տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քոյ համբերի տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ 'ի տէր։

'Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ. 'ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ 'ի Տէր։

'Ի տեառնէ է ողորմութիւն բազում, և 'ի նմանէ է փրկութիւն. և նա փրկեաց զԻսրայէլ յամենեցուն նեղութեանց նորա։

Փառք հօր։ Ամէն։ Յժամ և միշտ։

Օ հանգիստ յաւիտենական պարգևեա նոցա Տէր։

Եւ լոյս մշտնջենաւոր ծագեսցէ 'ի նոսա, և հանգիցեն 'ի խաղաղութիւն. ամէն։

Մարիամ կոյս և մայր շնորհաց, և շնորհալի մայր գթութեանց. 'ի ժամ մահուան ընկալ զմեզ, և պաշտպանեա 'ի թշնամեաց։ Աղերսս հրկիզեա։

Սէր կաթն կուսին, անգին արիւնն Յսին, միջնորդ լինիցին, մեղք մեր ջընջեսցին։ Աղերսս հրկիզեա։

Յա, Մարիամ, և հայր Յովսէփ, ըզսիրտս և զհոգիս և զմարմինս իմ ձեզ յանձն առնեմ։ Աղերսս հրկիզեա բաղխեալ ի գլխոյ։

Տէր ՅԾ, աշխարհիս խաղաղութիւն պարգևեա. Ամէն։

Հիւանդաց առողջութիւն պարգևեա. Ամէն։

Ի եղելոց հանգստութիւն պարգևեա՛. Ամէն։

Ի աւելոց նաւահանգիստ պարգևեա՛. Ամէն։

Բանտարկելոց ազատութի՛ պարգևեա՛. Ամէն։

Ծագաւորաց քրիստոնէից սէր և միաբանութի՛ պարգևեա՛. Ամէն։

Արքոյ եկեղեցւոյ բարձրացումն պարգևեա՛։ Ամէն։

Հոգւոց քաւարանի ազատութի՛ պարգևեա՛. Ամէն։

Ի՜ — 'ի վախճանի ասա՛։

Փառք քեզ Տէր Աստուած. որ պարգևեցեր զօրս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել, մարդասէր Աստուած, զառաջակայ գիշերս՝ որ 'ի վերս մեր գալոց է, 'ի մեղաց փրկեա՛, 'ի չարեաց ազատեա՛, 'ի գործս բարիս առաջնորդեա՛, առաւօտու օրհնութեցն և փառաբանութեցն արժանի արա զամ հաւատացեալս անուանդ քում սքոյ, և պահեա՛ 'ի խաղաղութե։ Տէր Աստուած մեր, տո՛ւր զքո խաղաղութիդ ամենայն աշխարհի. բարձ զցասումն և զպատուհասն 'ի յարարածոց։ Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց կենդանեաց և

հանգուցելոց. ողորմեա՛ զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, սպասաւորաց. և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սուրբ տաճարիս են հանգուցեալ։

Տէր ա՛ծ, օգնեա՛ թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին, պահելով 'ի խաղաղութիւն։

Տէր ա՛ծ մեր, պահեա՛ զառաջնորդս և զեղբայրութիւս մեր ամբողջ և անխռով 'ի կամս ողորմութիւն քոյ։ Նշանաւ սո՛ւրբ և պատուական խաչիս քո հալածեա՛ զերևելի և զաներևոյթ թշնամին 'ի սահմանաց մերոց, և 'ի բնակուէս մերմէ. փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք հօր և որդւոյ և։
Ս.յժմ և միշտ և յաւիտ"։

Օրհնեալք եղերուք 'ի շնորհաց ա՛ստ հոգւոյն. հանգերուք խաղաղութիւն. և ա՛ր եղիցի ընդ ամենեսեանդ. Ամէն։

Լոսոսովանութիւն հաւատոյ։

Ա՛ննապարհ և ՀՇմարտութի՛ և կեանք, ա՛ր իմ և ա՛ծ իմ, որ առաջնորդես հո-

գւոց մերոց 'ի ձեռն եկեղեցւոյ քում սրբոյ. և ես հաւատամ և դաւանեմ զոր ինչ ուսուցանէ կաթողիկէ և առաքելական 'նբ եկեղեցի. և ցանկամ զնորհօք քո կեալ մինչև ցմահ 'ի 'նբ հաւատս յայս։

Յոսոյ։

Ամենակալ և բազումողորմ 'ած, յոյս յուսացելոց 'ի քեզ, որ խոստացար հաւատացելոց քոց տալ թողութիւն մեղաց, և արժանի լինել արքայութեդ երկնից. մեղուցեալ ծառայս քո կարդամ առ քեզ, յուսացեալ ապաշխարութեամբ և գործովք բարեաց հանդիպել 'ի քէն թողութե մեղաց և կենացն յաւիտենից 'ի ձեռն չարչարանաց և մահուան միածնի քո 'ոն մերոյ յիսի քոի. ընդ որում քեզ հօր և 'նբ հոգւոյդ վայելէ փառք իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սերոյ։

Որ աղբիւրդ ես 'ամ բարութեանց, և պարգևատու արարածոց քոց. որ ստեղծերդ զիս և փրկեցեր, սիրեմ զքեզ 'ի բոլոր սրտէ և 'ի բովանդակ մտաց. և վասն սիրոյ քո սիրեմ և զբարեկամս և

զԹշնամիս իմ, զոր հրամայեցեր. և ընտրեմ զմահ քան խոտորել երբէք 'ի պատուիրանաց քոց։

Օղջման։

Ցեր ՝ած փրկութեան իմոյ, որ ողորմածդ ես և գԹած, երկայնամիտ և բազումողորմ. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա 'ի չար Ճանապարհէն և գկեալ։ Դեզ մեղայ, և չար առաջի քո արարի. արդ անկեալ աղաչեմ զքեզ, և խնդրեմ զԹողութիւն յանցանաց իմոց. ՝ած քաւեա զիս զմեղաւորս. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուՃանն՝ զոր մերկացայ մեղօք. և հաստատեա՛ զիս 'ի շնորհս քո, զի մի՛ ևս այսուհետև մեղայց քեզ։

Պատրաստութիւն առ աբ ծնունդն Քրիստոսի։

Օրհնեալ է ժամն այն, ուր կոյս Մարիամ, յորում եղեր մայր աստուծոյ։
Ողջոյն քեզ մարիամ լի շնորհօք Ի այնմ։
Յանդիցս երկնից։
Օրհնեալ է ժամն այն, ուր կոյս Մարիամ, յորում ծնար զորդին աստուծոյ։
Ողջոյն քեզ մարիամ լի շնորհօք Ի այնմ։

Օրհնեալ է առաջին շրթն կաթին, ով կոյս Մարիամ, զոր դիեցաւ 'ի ստեանց քոց որդին Աստուծոյ։

Աղջոյն քեզ մարիամ լի շնորհօք և այն։

Օրհնեալ է առաջին համբոյրն, ով կոյս Մարիամ, զոր ետուր ածային շրթանց որդւոյն այ։

Աղջոյն քեզ մարիամ լի շնորհօք և այն։

Աղօթք երեկոյի Ճրագալուցին 'ի լրումն հաղար ողջունեցն։

Ով հզօր դշխոյ հրեշտակաց, սրբուհի և մայր քոյ, կթած և ողորմած տիրուհի. անարժան ծառայս (այս անուն) խոնարհեալ յամենասուրբ ոտս քո՝ աղաչեմ զքեզ, ընկալ յինէն 'ի տառապեալ և 'ի մեղուցեալ ծառայէ քումմէ զհընգեսին զուրախական խորհուրդս սուրբ վարդարանի քո, և զհազար ողջոյնսն, հանդերձ օրհնութեամբքն, զորս մատուցի անարժանապէս քումմ մեծութեդ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ, տիրամայր և կոյս, ընկալ վասն իմ 'ի նորածին որդւոյ քումմէ շնորհս փոխանակ հազարացն, զի 'ի կենդանութեան զղջացեալ 'ի բոլոր սրտէ, և 'ի մահու՝ հասցց անվտանգ 'ի կեանսն յաւիտենից. ամէն։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ս. ԽՄ. Ա. ՄԱՍՇԱՐԱՅԻ